ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ՊԱՇՏՈՆԸ՝

«Մարզչամանկավարժական ֆակուլտետ»-ի դեկանի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

- հաստատում է բոլոր ուսումնական պլանները և ծրագրերը (բակալավրիատ, մագիստրատուրա, լրացուցիչ կրթություն), ուսումնական գիտակարգերի թեմատիկան, ատենախոսական, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները,
- վերահսկում է ֆակուլտետին կից մասնագիտական ծրագրերի իրականացումը,
- վերահսկում է ուսանողների միջանկյալ, եզրափակիչ, ամփոփիչ և ավարտական ատեստավորումը,
- կարգավորում է ավագների գործունեությունը,
- մասնակցում է ֆակուլտետի կադրերի ընտրության, վերադասավորման գործընթացին, ինչպես նաև զարգացման և կատարելագործման ծրագրերի իրականացմանը:
- իրազեկում է ամբիոնի վարիչներին, աշխատակիցներին նրանց վերաբերող ինֆորմացիայի, առաջադրանքների վերաբերյալ, որոնք քննարկվում են ռեկտորատում և հետևում դրանց իրագործմանը,
- կատարում է անմիջական ղեկավարի կողմից տրվող այլ հանձնարարականներ:

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- Բարձրագույն կրթություն
- Գիտական կոչում և աստիճան
- Առնվազն վերջին 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ
- Հայերենի և անգլերեն կամ ռուսերեն լեզվի գերազանց իմացություն
- Համակարգչի իմացություն (MS Office, Internet tools)

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ 26.11.2025թ, ժամը՝ 17:00-ն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ՝

Հայտարարված մրցույթով հետաքրքրված անձինք «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժնի rima.babayan@sportedu.am էլեկտրոնային հասցեին են ուղարկում ներքոնշյալ փաստաթղթերը՝ «թեմա» (subject) դաշտում նշելով պաշտոնի անվանումը.

1) ամբիոնների կամ գիտական, հետազոտական կենտրոնների կողմից առաջադրվելու դեպքում՝ որոշումը, ինքնաառաջադրման դեպքում՝ ռեկտորին հասցեագրված դիմումը,
2) առաջադրված թեկնածուների գրավոր համաձայնությունները,
3) ինքնակենսագրություն (CV),
4) բարձրագույն կրթությունը հավաստող փասթաթղթերի (վկայական, դիպլոմ, հավաստագիր և այլն) պատճեն(ներ)ը,
5) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը,
6) տպագրված գիտական, մեթոդական աշխատանքների կամ գյուտերի հաստատված ցանկը,
7) գիտամանկավարժական աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթը,
8) պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալներ, եթե առկա են,
9) վերապատրաստման կամ որակավորման բարձրացման վկայականների, դիպլոմների պատճեն(ներ)ը, եթե առկա են,
10) թեկնածուի՝ 5 տարվա ծրագիրը (հայեցակարգ):